



### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 5-Բ ԳՈՒՄԱՐՄԱՆ 3-Բ ԵՎ 4-Բ ԴՆՍԱՇՐՋԱՆՆԵՐԻՆ (2013թ.) ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

#### Սիրելի համաքաղաքացիներ,

Ինչպես արդեն գիտեք ընտրվելուց հետո՝ 2012 թվականի հունիսի 1-ից Վանաձորում գործում է իմ պատգամավորական գրասենյակը, որտեղ քաղաքացիների ընդունելությունների կազմակերպման հետ մեկտեղ ընդունվում են նաև դիմումներ և առաջարկություններ ամենատարբեր հարցերի շուրջ: Մինչ այժմ ինձ հասցեագրված բոլոր գրավոր նամակներին արձագանքել եմ գրավոր, իսկ անհրաժեշտության դեպքում նաև հարցը բարձրաձայնել Աժ ամբիոնից: Ծարունակվել են հետընտրական բակային հանդիպումները, որոնց նպատակն է եղել քաղաքացիների հետ անմիջական և մշտական կապի պահպանումը: Այս ծանալարիով փորձել եմ մշտապես իրազեկված լինել քաղաքացիներին հուզող խնդիրների և հարցերի վերաբերյալ և փնտրել եմ դրանց լուծման հնարավոր տարբերակները:

*Այս տարի իմ կողմից ՀՀ Աժ-ում բարձրացվել և քննարկման առարկա են դարձել հետևյալ խնդիրները.*

- ՀՀ մարզերում գործող ծննդատների սանիտարական վիճակի և տեխնիկական ու կադրային հագեցվածության պակասի վերաբերյալ գրություն եմ ուղղել ՀՀ առողջապահության նախարարին:
- Նախորդ տարվա հոկտեմբերին «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին որոշման հավելվածի ուսումնական հաստատությունների ցանկին իմ առաջարկությամբ լրացվել է «պետական վարժարան» բառերով, ինչի շնորհիվ վարժարաններում աշխատած մանկավարժների ստաժը կներառվի կենսաթոշակի հաշվարկում:
- «Բնաշտպանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի առնչությամբ բարձրացրել եմ նախագծում ներառվող բնաշտպանման մասին և նրանց ժառանգներին տրվող արտոնյալ պայմաններով երկարամյակ վարկերի տրամադրման հետ կապված խնդիրների կարգավորման հարցը, մասնավորապես, այն, որ միջոցներ ձեռնարկվեն վարկի տրամադրման արտոնյալ պայմանների իրական, այլ ոչ թե ձևական լինելն ապահովելու ուղղությամբ:
- «Տեսակարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ծանալարիային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հետ կապված հարց եմ բարձրացրել կառավարության կողմից տրված և չիրականացված խոստման վերաբերյալ, մասնավորապես, նախագուշտացող ցուցանակները կիրառությունից չհանելու մասին:
- Գրություն դիմել եմ ՀՀ վարչապետին՝ առաջարկելով Վանաձորը հռչակել համահայկական երիտասարդական մայրաքաղաք: *Կառավարությունից պատասխան է ստացվել առ այն, որ ՀՀ երիտասարդական մայրաքաղաքը որոշվելու է մրցույթի արդյունքներով:*
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ բարձրացրել եմ համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների հարաբերակցության կարգավորման հարցը:
- Վանաձորի բնակիչների դիմումների հիման վրա բազմիցս գրավոր և բանավոր հարցումների, հարցապնդումների և ելույթների ձևով դիմել եմ կառավարությանը և բարձրացրել Վանաձորի 3-րդ կարգի վթարային շենքերի, այդ թվում՝ Ավետիսյան 55/57-59, Աղայան 65, Երևանյան խճ. 109, Գուգարք համայնքի թիվ 3 և ընդհանուր առմամբ վթարային ծանալված շենքերի հրատարակ ամրացման հարցը: *Որպես պատասխան մշտապես ստացվել է հետևյալը՝ այդ շենքի վերականգնման և ուժեղացման աշխատանքները կարող են իրականացվել միայն նման 84 շենքերի վերականգնման ծրագրի շրջանակներում, ինչը պահանջում է լրաց ֆինանսական միջոցներ: Ծենքերի տեխնիկական զննության իրականացումը նույնպես կախված է նույն պայմանից: Դրանից հետո Աժ նիստում կառավարության հետ հարց ու պատասխանի ժամանակ բարձրացրել եմ Վանաձորի 84 3-րդ կարգի վթարային բազմաբնակարան շենքերի ամրացման հարցը, քանի որ կառավարությունից, մասնավորապես քաղաքաշինության նախարարությունից ստացվող պատասխաններն անորոշ են և խնդրել հայտնել ժամկետներ, թե երբ կավարտվի այդ շենքերի գույքագրումն ու կիրականացվեն ամրացման աշխատանքները: Քաղաքաշինության նախարար պատասխանել է, որ պետք է առաջին հերթին որոշվի, թե որ շենքերն են համարվում առաջնահերթ, իսկ գույքագրման աշխատանքները քանի որ ծավալում են, նախատեսվում է, որ կավարտվեն 2014 թվականի առաջին կեսնակալին:*
- Աժ նիստում տրամադրվել է կապի նախարարին հարց եմ ուղղել Երևան-Ապարան-Վանաձոր ծանալարի մշտապես մինչև Ապարանի վերանորոգված մասի և այդ կետից մինչև Ապիտակ տանող հատվածի նորոգման խնդիր հետ կապված: *Այդ հատվածը կարճ ժամանակ անց ասֆալտապատվել է:*

- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկումների ժամանակ առաջարկել եմ իջեցնել արտերկրում տրվող ՀՀ անձնագրերի դիմաց գանձվող 65.000 ՀՀ դրամ պետական տուրքը:
- Աժ-ում Կառավարությանը գրավոր և բանավոր հարցերի տեսքով բարձրացրել եմ Վանաձորում գործող «Միեր-Լիտա» ընկերությանը պաշտոնատար անձնաց կողմից հարկային և մաքսային ծնշումների և անհարկի ստուգումների ենթարկելու խնդիր վերաբերյալ՝ պաշտպանելով ընկերության աշխատակիցների իրավունքները, հայտարարել, որ նմանատիպ ցանկացած գործով բարձրաձայնելու եմ պետական մարմինների և պաշտոնատար անձնաց լիազորությունների չարաշահման մասին: *Արդյունքում ընկերության հանդեպ ծնշումները դադարեցվել են:*
- Հարցերի և ելույթի տեսքով անդադարձել եմ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2011 և 2012թ թվականների զեկույցներին և դրանց բովանդակության ու կազմման ձևի վերաբերյալ հանդես եկել համակարգային առաջարկություններով:
- Տեղեկանալով, որ Վանաձոր քաղաքային համայնքի ներհամայնքային ծանալարները բարեկարգելու նպատակով կառավարությունն իր պահուստային ֆոնդից մարզպետարանին հատկացրել է 300 մլն դրամ, գրությամբ դիմել եմ Վարչապետին՝ առաջարկելով, որ եթե կատարված ծանալարիային նորոգումը անվճար 1 տարվա ընթացքում քանդվի, ապա նորոգողները պարտավոր են իրենց միջոցներով կրկին կատարել բարեկարգում, քանի որ բազմաթիվ դեպքերում կատարված աշխատանքները 1 տարի էլ չի պահպանվել և հաջորդ տարի պետական և համայնքային բյուջեներից կրկին միջոցներ են ծախվում միևնույն ծանալարները նորոգելու նպատակով: *Կառավարության որոշումով նախատեսվել է համապատասխան դրույթ:*
- Վանաձորի Հաղթանակի փողոցի երկրորդ աշխարհամարտում զոհվածների Հուշարձանի թաղամասի բնակիչների դիմումով դիմել եմ Վանաձորի քաղաքապետին, Լոռու մարզպետին, մշակույթի նախարարին, Ոստիկանության Լոռու մարզային վարչության պետին՝ խնդրելով, որ միջոցներ ձեռնարկվեն Հուշարձանն ամրացնելու, տարածքը բարեկարգելու և վնասարարներից ու թրամուլյները պաշտպանելու ուղղությամբ: *Առաջարկը քննարկվել է ընդունվել է, Հուշարձանն ամրացվել է բարեկարգվել է, տարածքը ևս բարեկարգվել է, և այդ աշխատանքները կրելու են շարունակական բնույթ:*
- Լոռու մարզի Գուգարք համայնքի բնակիչների դիմումով Վանաձոր-Գուգարք ծանալարի ասֆալտապատման խնդրի առնչությամբ դիմել եմ Վանաձորի քաղաքապետին և խնդրել լուծել չնորոգված հատվածների ասֆալտապատման խնդիրը: *Քաղաքապետը պատասխանել է, որ նախատեսվում է ծանալարի ծածկույթը բերել երթևեկելի վիճակի փոսային նորոգումների միջոցով:*
- Արմավիր և Արագածոտնի մարզերի բազմաթիվ գյուղացիների դիմումով՝ դիմել եմ ՀՀ կենտրոնական բանկի նախագահին, որպեսզի վերջինս առևտրային բանկերի հետ քննարկի մայիսի 12-ին տեղացած առատ կարկուտից տուժած գյուղացիական տնտեսություններին տրամադրված վարկերի սառեցման և հնարավորության դեպքում այդ վարկառուների ժամանակ տրամադրելու հարցը, որպեսզի նրանք կարողանան ոտքի կանգնել կրած վնասներից հետո և ապա շարունակեն վարկերի մարումը:
- Գուգարք համայնքի կիրակնօրյա դպրոցի աշխատակիցների խնդրանքով դիմել եմ Լոռու մարզպետին, որպեսզի վերջինս աջակցի դպրոցին շենք, մասնավորապես՝ նախկին տնակային սաքուլատորիայի շինությունը տրամադրելու հարցում: *Մարզպետը պատասխանել է, որ համայնքի ղեկավարի հետ քննարկվել է ամբողջատորիայի համար նախատեսված շենքի կառուցումից հետո այդ տնակային շինության հետագա պատկանելության հարցը: Համայնքի ղեկավարը հայտնել է, որ այդ շինությունը տրամադրվելու է մարզադպրոցին, իսկ կիրակնօրյա դպրոցը գործելու է ավագ դպրոցի շենքում, որտեղ բացի այժմյան դասասենյակից անհրաժեշտության դեպքում կհատկացվի այլ տարածք և դասասենյակներ, ինչպես նաև առաջարկվել է կիրակնօրյա դպրոցի և «Նախկ» պարի խումբը տեղավորել Գուգարքի մշակույթի տան շենքում:*
- Վանաձորի Լազյան փողոցի բնակիչների դիմումով՝ դիմել եմ Վանաձորի քաղաքապետին, որպեսզի վերջինս միջոցներ ձեռնարկի փողոցի լուսավորության խնդիրը լուծելու համար: *Քաղաքապետը տեղեկացրել է, որ այդ աշխատանքները նախատեսվում է կատարել 2014 թվին:*
- Վանաձորի դպրոցների ուսուցիչների խնդրանքով գրությամբ դիմել եմ ՀՀ կրթության և գիտության նախարարին՝ խնդրելով, որպեսզի նա ընձնումով մոտենա Վանաձորի դպրոցներում համակարգային տեխնիկայի անբավարարության և ինտերնետ կապի գործ արագության պատճառով ուսուցիչների կողմից ռաժ դեպքերում dasaran.am կայքում կատարվող գրանցումների ուշացումներին:




- Վանաձորի Բաժնու փողոցի բնակիչների խնդրանքով՝ դիմել եմ Վանաձորի քաղաքապետին, որպեսզի վերջինս միջոցներ ձեռք առնի թաղամասի փողոցների նորոգման ուղղությամբ: *Քաղաքապետարանից պատասխան է ստացվել այն մասին, որ Բաժնու փողոցի 8-րդ դպրոցից մինչև Սանկու-Պետրերովի փողոցի ծանալարի հատվածի բարեկարգման խնդիրը հաշվառված է 2014 թվականի նմանատիպ աշխատանքների իրականացման ծրագրում:*
- Գուգարք համայնքի թիվ 9 և 10 շենքերի բնակիչների խնդրանքով՝ դիմել եմ Լոռու մարզպետին՝ խնդրելով, որ այդ շենքերի տանիքների նորոգման հարցը ներառվի Հանրապետության նախագահի առաջիկա հրատապ ծրագրերի մեջ: *Մարզպետից ստացվել է պատասխան առ այն, որ այդ շենքերն ընդգրկված են Լոռու մարզի համայնքների քաղաքաշինական ոլորտի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ցանկում:*
- Խորհրդարանում Կառավարության ծրագրի քննարկումների ժամանակ վարչապետի ուշադրություն եմ հրավիրել Հայաստանի տարածքային համաչափ զարգացման, համայնքների խոշորացման, տնակային ավանդների վերացման և բնակարանաշինության խնդիրների վրա:
- Ընտրական օրենսգրքը բարեփոխելու հետ կապված քննարկումների ժամանակ բարձրացրել եմ ցուցակների հրապարակման անհրաժեշտության և ընտրական գործընթացի հետ կապված այլ խնդիրներ:
- Վանաձորի պետական քոլեջների անձնակազմերի աշխատակիցների խնդրանքով՝ դիմել եմ ՀՀ կրթության և գիտության նախարարին՝ խնդրելով, որ պետական քոլեջների աշխատակիցներին տրվեն հավասար արտոնություններ, ինչպես մյուս պետական ուսումնական հաստատություններում, մասնավորապես, նրանք ևս օգտվեն սոցիալական փաթեթի ծրագրից, ստանան պարզևատուր և այլն: *2014թ. ՀՀ պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ առաջարկը մերժվել է, քանի որ դրա համար անհրաժեշտ է եղել 592 մլն դրամ:*
- Վանաձորի Գրիգոր Լուսավորչի փողոցի 46, Երևանյան խճուղու 103/1 և 137, Տիգրան Մեծի 17 շենքերի բնակիչների խնդրանքով՝ դիմել եմ Վանաձորի քաղաքապետին, որպեսզի աջակցություն ցուցաբերվի շենքի տանիքների նորոգման հարցում: *Վերջինս պատասխանել է, որ համայնքի սահմանված կարգի անհրաժեշտ է սեփականատերերի 10% ներդրում, որպեսզի դրանից հետո կառավարության կողմից տրամադրվող գումարով կկազմակերպվեն հիմնանորոգման աշխատանքները:*
- ՀՀ հարկային օրենսդրության, մասնավորապես շրջանառության հարկի հետ կապված քննարկումների ժամանակ վարչապետին ուղղված հարցի տեսքով բարձրացրել եմ շրջանառության հարկը 3.5% սահմանելու հետևանքով հարկի ավելացման խնդիրը և առաջարկել, որպեսզի դրույթաչափը կրճատվի: *Առաջարկը, ցավոք սրտի, չի ընդունվել:*
- Բարձրացրել եմ նաև պետական բյուջեի միջոցների անհարյունավետ ծախսման հարցը՝ վկայակցելով այն հանրային արկի հետ կապված քննարկումների ժամանակ ծախսումներ է անում, սակայն, օրինակ, տնակային ավանդները շարունակում են մնալ չլուծված խնդիր:
- Լոռու մարզի Ծառույան համայնքի բնակիչների խնդրանքով՝ գրությամբ դիմել եմ մարզպետին և միջնորդել, որպեսզի վերջինս համայնքի միակ դպրոցի տանիքի վերանորոգման խնդիրը ներառի Հանրապետության Նախագահի հրատապ ծրագրերի մեջ: *Մարզպետը պատասխանել է, որ այդ շենքի հիմնանորոգումն ընդգրկվել է «Կրթական և մշակութային օբյեկտների հիմնանորոգում, կառուցում և արդիականացում» ծրագրի նախագծում:*
- Վանաձոր քաղաքի հնձորտու թաղամաս կատարված այցելության ժամանակ ինձ են դիմել տեղի բնակիչները, մասնավորապես Խճ-105 տների բնակիչները, և հայտնել,

- որ նրանցից պահանջում են վճարել մինչև 2010 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածի աղբահանության գումարը, այնինչ մինչ այդ ամսաթիվը նրանք ոչ պայմանագիր են կնքել, ոչ էլ այդ հատվածում իրականացվել է կանոնավոր աղբահանություն: Խնդրի առնչությամբ անհպաղ դիմել են Վանաձորի քաղաքապետին՝ խնդրելով, որպեսզի վերջինս այդ մարդկանց ազատի ավելորդ քաջքնովից՝ հիմք ընդունելով պայմանագրի բացակայությունը և պահանջի՝ հայցային վաղեմության ժամկետն ավարտված լինելու հանգամանքը:
- Վանաձոր թաղամասի 40-ամյակի հուշարձանի թաղամասի բնակիչների հետ հանդիպման ժամանակ տեղեկացա, որ հուշարձանի տարածքը բարեկարգման ու ասֆալտապատման, իսկ հուշարձանին հարող փողոցը լուսավորման կարիք ունեն: Եշված հարցով դիմել են քաղաքապետին և խնդրել բարեկարգել Վանաձոր թաղամասի 40-ամյակի հուշարձանի տարածքն ու փողոցը՝ տեղում ապահովելով լուսավորություն: *Քաղաքապետից ստացվել է պատասխան առ այն, որ 2013թ. բյուջեով դրա համար գումար չի նախատեսվում, սակայն հնարավորության սահմաններում հարցին լուծում կտրվի:*
  - Քրդաքապետին են դիմել նաև Վանաձորի Կարբիշև Իրբանցքի և 6-րդ դպրոցի հարևանությամբ բանված և չասֆալտապատված փողոցների առնչությամբ՝ խնդրելով պարտավորեցնել կապալառու ընկերությանը ասֆալտապատել իր կողմից բանված և չնորոգված մասը: *Քաղաքապետն առաջարկել է պատասխանատու կազմակերպություններ «Դորոժնիկ» ՍՊԸ և «Լոռի-ջրմուղկույտի» ՓԲԸ ղեկավարներին անհապաղ ձեռնամուխ լինել թերությունների վերացմանը:*
  - Բնակիչների դիմումով քաղաքապետին են դիմել նաև Վանաձորի Աղայան 75 շենքի բակի բարեկարգման խնդրի առնչությամբ: *Քաղաքապետից պատասխան է ստացվել առ այն, որ շենքի սպասարկման գումարներով կապակց-պատվի շքանուտը, կկատարվեն դռների ներվանն ու այլ աշխատանքներ: Կատավարության կողմից նպատակաշահյին ֆինանսական աջակցության առկայության դեպքում բարեկարգման աշխատանքներ կիրականացվեն:*
  - Նախկին ԽՍՀՄ Խնայբանի չԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման հարցով դիմել են վարչապետին և առաջարկել, որպեսզի առաջնահերթությունների նոր չափորոշիչներ սահմանելու պարտադիր հաշվի առնվեն դիմումատուի տարիքի ու առողջական վիճակի հետ կապված հանգամանքները:
  - Դիմել են վարչապետին՝ Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցման հատուկ դպրոցի («Էվրիկի») շենքային պայմանների խնդրով և որպես լուծում առաջարկել տրամադրել Վանաձորում գործող դպրոցների թերբեռնված մասնաշենքերից որևէ մեկը: *«Հ կթություն և գիտության նախարարն այցելել է դպրոց և տեղում ծանոթացել իրավիճակին: Այժմ քննարկվում է նոր մասնաշենքի տրամադրման հարցը:*
  - Խնձորուտի 2-րդ փողոցի ասֆալտապատման խնդրի առնչությամբ դիմել են վարչապետին ու մարզպետին և խնդրել լուծել այդ հարցը, քանի որ այդ ծանապարհ տանում է Վանաձորի մեծությամբ 2-րդ գերեզմանատուն, ավելին՝ դրանով հնարավոր է սահմանեմատ ավելի արագ հասնել Բազում թաղամաս և այդկերպ հանրային տրանսպորտը կիսայի ժամանակ ու ռեսուրսներ:
  - «Հբաղվածության մասին» օրենքի նախագծի քննարկման ժամանակ բարձրացրել են գործազրկության և արտագաղթի խնդիրը հատկապես Գյումրիից ու Վանաձորից՝ նշելով, որ անգամ եթե վերապատրաստումները հաջողությամբ ավարտվեն, միևնույն է կա աշխատատեղերի բացակայության լուրջ խնդիր և առաջարկել առաջնահերթ ուշադրություն դարձնել աշխատատեղերի ստեղծման վրա:
  - 2012 թվականից ծրագրված Վանաձորում տեխնոպարկ կառուցելու վերաբերյալ հարցմամբ դիմել են կառավարությանը՝ խնդրելով հայտնել, թե ինչ փուլում են գտնվում Վանաձորում տեխնոպարկի հիմնելու ուղղությամբ տարվող աշխատանքները, եթե նման աշխատանքներ տարվում են և ինչ ժամկետներում կարող ենք ակնկալել Վանաձորի տեխնոպարկի գործարկումը: *Պատասխան է ստացվել առ այն, որ Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը նախատեսվում է շահագործման հանձնել մինչև 2016 թվականը:* Այնուհետև առաջարկել են, որպեսզի մինչ 2016 թվականը Վանաձորում գործող կազմակերպությունների հետ համագործակցություն լինի, և կարգերի վերապատրաստման համար պատվերներ տրվեն ու նրանք վերապատրաստվեն, որպեսզի երբ տեխնոպարկը ստեղծվի, արդեն իննեն կոնկրետ մարդիկ, ովքեր կաշխատեն և կաշխատեցնեն այն, օրինակ, Վանաձորի հունկանական համայնքին կից գործող ուսումնահետազոտական կենտրոնը:
  - Վանաձորի «Լոռի-ջրմուղկույտի» ՓԲ ընկերության աշխատակիցների խնդրանքով հարցմամբ դիմել են վարչապետին՝ խնդրելով հայտնել, թե ինչ ընթացքում է այժմ գտնվում «Լոռի-ջրմուղկույտի» ՓԲ ընկերության աշխատակիցների աշխատավարձերի գծով կուտակված պարտավորությունների մարման գործընթացը: *Արդարադատության նախարարից ստացվել է պատասխան առ այն, որ ընկերությունը սկսվել է ձանձվել և պարտավորությունների մարման գործընթացն իրականացնում է սնանկության գործով կառավարիչը:*
  - «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով ներդրվող պարտադիր կենսաթոշակային բաղադրիչի վերաբերյալ քննարկումների բարձրացրել են գործընթացին

- և ընթացակարգին քաղաքացիների տեղեկացվածության ցածր մակարդակի, ինչպես նաև համակարգին չվստահելու հետ կապված հարցերը, դեմ են արտահայտվել դրա ներդրմանը 2014 թվականի հունվարի 01-ից և առաջարկել երկարաձգել այդ ժամկետն առնվազն մինչև նվազագույն աշխատավարձի բարձրացումը: *Ցավոք, առաջարկությունը չի ընդունվել:*
- «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը քննարկելիս բարձրացրել են Հարավ-Կովկասյան երկաթուղուն պետական բյուջեից սուբսիդավորելու հարցը, մասնավորապես այն, որ Երկաթուղու ՓԲ ընկերություն է, գործում է վնասներով, որոնք փոխհատուցում է ՀՀ քաղաքացու վճարած հարկերից, հետագայում առաջարկել են, որպեսզի հարցն ուսումնասիրման ենթարկվի ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից:
  - Լույս քննարկման ժամանակ կրկին անգամ բարձրացրել են ԽՍՀՄ ավանդների վերադարձման հարցը, ինչպես նաև Երևանում, Գյումրիում և Վանաձորում փողոցների բարեկարգման և ասֆալտապատման համար պետական բյուջեից ծախսվող միջոցների հսկայական տարբերության խնդիրը:
  - Կառավարությունից խնդրել են Վանաձորի թիվ 3 մշակույթի տան ջեռուցման համար պահուստային ֆոնդից տրամադրել 6.5 մլն դրամի միջոցներ, որպեսզի այն ձմռան ամիսներին չհիսկվի: *Որոշվել է խնդիրը համարել առաջնահերթ և տնտեսված միջոցների հաշվին ֆինանսավորել Վանաձորի մշակույթի տան մասնակի վերանորոգումը. նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները՝ 888.000 դրամ գումարով և շինաշխատանքները՝ 10 մլն դրամ ընդհանուր արժեքով:*
  - Կառավարության հետ հարց ու պատասխանի ժամանակ վարչապետին հարց են ուղղել Վանաձորի ճարտարագիտական համալսարանի մասնաճյուղի լուծարման և Վանաձորում համալսարան կառուցելու վերաբերյալ, հայտնել, որ ուսանողներից և դասախոսներից շատերը վրդովված են այդ որոշման կապակցությամբ: *Լուծարման հարցը հանվել է կառավարության նիստի օրակարգից, ինչից հետո կրթության և գիտության նախարարն այցելել է Վանաձոր և հանդիպել ԲՈՒՀ-ի դասախոսների և ուսանողների հետ:*
  - «Վանաձոր-Քիմպոմ» ՓԲ ընկերության աշխատակիցների չվճարված աշխատավարձերի և գործարանի հետևակարի վերաբերյալ գրավոր հարցմամբ դիմել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին:
  - Կենսաթոշակային բարեփոխումների քննարկման ժամանակ բարձրացրել են զինծառայողների տրվող ցածր թշակների խնդիրը:
  - Աժ նիստում կառավարության հետ հարց ու պատասխանի ժամանակ հարց են ուղղել ՀՀ տարածքային կառավարման նախարարին նոյեմբերի 24-ին Գոգարք համայնքում տեղի ունեցած հրդեհի և դրա պատճառով դրսում մնացած 25 անձանց մասին, առաջարկել, որպեսզի այդ հատվածում, որտեղ բնակարանները շատ էժան են, նրանց համար բնակարաններ ձեռք բերվեն: *Նախարարը պատասխանել է, որ լուծման նման տարբերակները քննարկվում են: Որոշվել է, որ տուժված ընտանիքների բնակարանային պայմանները անհատուց պետական ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով բարելավելու նպատակով Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացնել 21 մլն. դրամ և սահմանել, որ՝*
    - որոշման 1-ին կետով նախատեսված աջակցությունը տրամադրվում է շուկայից պարտաստի բնակելի տուն (բնակարան) ձեռք բերելու համար.
    - որոշմամբ ամրագրված աջակցության չափից ցածր արժողությամբ բնակելի տան (բնակարանի) ձեռքբերման դեպքում արժեքների տարբերությունը մնում է աջակցություն ստացող անձի տրամադրության տակ, իսկ ավելի բարձրի դեպքում արժեքների տարբերությունը լրացվում է աջակցություն ստացողի սեփական միջոցների հաշվին:
  - 2012 թվականին իմ կողմից մշակվել է ներկայացվել են մի շարք օրենքների նախագծեր և այլ օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ առաջարկություններ: 2013-ին իմ կողմից ներկայացված նախագծերից ստորև նշվում են կարևորագույնները.
    - 1. Մշակել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը, որով վարչական դատարանի՝ վարչական մարմնի գործողությունը և անգործությունը ոչ իրավաչափ ձանաչելու մասին գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու հնարավորություն է տրվում, ինչպես նաև անձի՝ նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտի բողոքարկման հնարավորություն է տրվում թե նյութական, թե դատավարական իրավունքի խախտման հիմքով: Նախագիծը սեպտեմբերին ընդունվել է 2-րդ ընթացքում և ամբողջությամբ:
    - 2. Մշակել են «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը, որով առաջարկվում է տարեկան մինչև 58,35 մլն դրամ իրացման շրջանառություն ունեցող հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպություններն ընդգրկվեն շրջանառության հարկով հարկվող սուբյեկտների շարքում: Այս պահին նախագիծը նստաշրջանի օրակարգում ընդգրկվելը հետաձգվել է մինչև մեկ տարու:

- 3. Մշակել և Աժ քննարկման են ներկայացրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն և դատական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը, որով առաջարկվում է վերաքննիչ բողոք բերելու համար որպես նվազագույն սահմանված գործով վեճի առարկայի արժեքի 50-ապատիկը դարձնել 35-ապատիկ՝ հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձ սահմանված է 35000 դրամ: Ինչպես նաև սահմանել վերաքննիչ բողոք բերելու նշված սահմանափակումից բացառություն, այն է՝ առաջին ատյանի դատարանի՝ արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական ակայք: Նախագիծն ընդգրկվել է չորսօրյա նիստերի օրակարգ:
  - 4. Համահեղինակությամբ ներկայացրել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը, որի հիմնական մեխն այն է, որ դրանով լուծում է տրվում գործնականում լայն տարածում ստացած այն խնդրին, երբ բազմաբնակարան շենքը կամ ստորաբաժանված շենքը կառուցված է կամ կառուցվում է մի քանի համասեփականատերերին պատկանող հողամասի վրա, հնարավոր չի լինում կնքել հիփոթեքի պայմանագիր, քանի որ անհնար է որոշմասը բնեղենով առանձնացնել:
  - 5. Մշակել և Աժ քննարկման են ներկայացրել «Սահմանափակ պատասխանավությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը, որով առաջարկվում է օրենքի 38-րդ հոդվածը խմբագրել այնպես, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտահերթ ժողովը իրավիքներ ունենա(ն) նաև առնվազն 10 տոկոս բաժնեմաս ունեցող մասնակից(ներ)ը: Նախագիծը քննարկվել է Աժ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում, ստացել դրական եզրակացություն և ընդգրկվել չորսօրյա նիստերի օրակարգ:
  - 6. Համահեղինակ են նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում լրացում և «Դատախազության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթին, որով սահմանվում է հատուկ ընթացակարգ ՀՀ գլխավոր դատախազի՝ Աժ-ին ներկայացվող տարեկան հաշվետվության ներկայացման համար:
  - 7. Մշակել և ներկայացրել են «Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը, որի ընդունման արդյունքում պատվովճար կատանան ոչ միայն «ժողովրդական», այլ նաև «Վաստակավոր» կոչման արժանացած քաղաքացիները:
  - 8. Մշակել և ներկայացրել են ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով մի շարք հստակեցումներ և ձգբարձումներ կլինեն քրեակատարողական օրենսդրության մեջ, ինչպես նաև պատշաճ վարքագիծ դրսևորող դատապարտյալների համար կլինեն լրացուցիչ արտոնություններ:
- Համահեղինակ են նաև օրենսդրական այլ նախագծերի: «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի ընդունման ժամանակ բազմաթիվ գրավոր առաջարկներ են ներկայացրել, որոնցից հիմնականները թվարկվում են ստորև.
- Առաջարկվել են, որպեսզի միջոցներ հատկացվեն՝
  - Վանաձորի 6-րդ դպրոցի տանիքի ու սանհանգույցների նորոգման համար,
  - Վանաձորում 3-րդ կարգի վթարային 84 շենքերից առնվազն 10 ամենավաթար վիճակում գտնվողներն ամրացնելու համար (միայն 2014-ին),
  - Առաջին խմբի հաշմանդամների կենսաթոշակն ամսական առնվազն 55400 դրամի հասցնելու համար, որպեսզի այն հավասարեցվի նվազագույն սպառողական զամբյուղին,
  - Խնձորուտի Երկրորդ փողոցի ասֆալտապատման համար,
  - Լոռու մարզի Ծախումյան համայնքի դպրոցի տանիքի հիմնանորոգման համար,
  - Առաջարկել են ավելացնել հանրային պաշտպանի գրասենյակի ֆինանսավորումը,
  - Ավելացնել գիտության ոլորտի ֆինանսավորումը:
- 2013 թվականին իմ կողմից տարբեր հարցերով ուղարկվել է 160 գրություն, ստացվել առնվազն 80 գրավոր դիմում: 2012-2013 թվականներին ավելի քան 500 քաղաքացի են ընդունել Վանաձորի պատգամավորական գրասենյակում: Իմ պատգամավորական գործունեության հետ անչվող բոլոր ելույթների և հարցազրույցների տեսանյութերը հնարավոր է դիտել այստեղ՝ [YouTube.com/user/edmonmarukyan](https://www.youtube.com/user/edmonmarukyan):



Լավագույն մաղթանքներով, Էդմոն Մարության ՀՀ Աժ պատգամավոր